ՓԻՏ ՍԵՐՎԻՆԿԱ
(PETE CERVINKA)
ՏՆՕՐԵՆ

Կալիֆորնիայի նահանգ – Առողջապահության և մարդկային ծառայությունների գործակալություն
Զարգացման ծառայությունների վարչություն
1215 O Street, Sacramento, CA 95814
www.dds.ca.gov

ԳԷՎԻՆ ՆՅՈՒՍՈՄ
(GAVIN NEWSOM)
ՆԱԽԱՆԳԱՊԵՏ

31 դեկտեմբերի, 2024թ. P-2024-Տարածաշրջանային կենտրոնի աշխատանքի արդյունավետության ցուցանիշներ-001

ՈՒՄ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐ

ԹԵՄԱ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՎՃԱՐ

Սույն նամակի նպատակն է տրամադրել լրամշակված տեղեկատվություն Տարածաշրջանային կենտրոնների արդյունավետության (RCPM) բարձրացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ, որոնք կապված են ինքնորոշման ծրագրի (SDP) և առաջիկա հատկացումների հետ, ինչպես նաև տրամադրել հաշվապահական հաշվառման վերաբերյալ լրացուցիչ ուղեցույցներ:

<u>SDP-ի խթանման միջոցառումները</u>
2024 թվականի հունիսի 17-ի նամակում Վարչությունը ներկայացրել է SANDIS-ի հաշվետվությունների պահանջների լրամշակված տեղեկատվության մանրամասները: Բոլոր 21 տարածաշրջանային կենտրոնները հաջողությամբ կատարել են այս պահանջը՝ մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը SANDIS-ում մուտքագրելով SDP-ի հետ կապված անհրաժեշտ տվյալների տարրերը: Արդյունքում յուրաքանչյուր տարածաշրջանային կենտրոնին կտրամադրվի խրախուսական վճար $362,000 չափով:

<u>Հատկացումներ</u>
Տարածաշրջանային կենտրոնները կստանան SDP-ի խրախուսական վճարը որպես D-4 շարքի հատկացման մաս, որը տրվել է 2024 թվականի դեկտեմբերի 26-ին: Բացի SDP-ի հետ կապված հատկացումների, D-4 շարքը կհատկացնի նաև 2022-2023 ֆինանսական տարվա արտոնությունները՝ համաձայն 2024 թվականի հուլիսի 29-ին թողարկված Հրահանգների: D-4 հատկացումը RCPM-ի առաջին հատկացումն է, որը ներառյալ մինչ օրս ստացված բոլոր խթանները:

<u>Պահանջատիրություն</u>
Այս միջոցներն արդեն ստացվել են: Վճարման հայտեր ներկայացնելու համար տարածաշրջանային կենտրոնները կարող են չսպասել, որպեսզի առաջանան ծախսեր/գնումներ: Վճարման հայտերը պետք է ներկայացվեն հատկացումների ամբողջ գումարի համար ոչ ուշ, քան 2025 թվականի մարտի 15-ը: Դա թույլ կտա ապահովել հաշվառումը տարվա վերջում և Ընդհանուր ֆոնդի գործառնությունների վճարման հայտի ստանդարտ ձևի կիրառումը: Տարածաշրջանային կենտրոնները պետք է մշակեն հետագծման ներքին ընթացակարգեր, որպեսզի կանխեն վճարման կրկնակի հայտերի ներկայացումը ծախսերը իրականացնելուց հետո:

Հաշվապահություն
Տարածաշրջանային կենտրոններն իրավունք ունեն իրենց հայեցողությամբ օգտվել խթաններից՝ սեփական գործառնական կարիքները բավարարելու համար: Այս ռեսուրսների օգտագործման տեսանելիությունն ապահովելու համար ամբողջ նահանգում ստեղծվել են գլխավոր հաշվառման գործառնական ծախսերի հաշիվներ, ինչպես նշված է 2024 թվականի դեկտեմբերի 16-ին հրապարակված 557 տեխնիկական տեղեկագրում: Հաշիվները բաղկացած են ուղղակի ծախսերից, անուղղակի ծախսերից և SS/սարքավորումների ծախսերից, որոնք արտացոլում են գործառնական կառուցվածքը՝ սահմանված աշխատակազմի հիմնական բանաձևում:

Խնդրում ենք դիմել RCMeasures@dds.ca.gov այս նամակի հետ կապված հարցերի վերաբերյալ: Ցանկանում ենք շնորհավորել տարածաշրջանային բոլոր կենտրոններին այս խթանը ստանալու կապակցությամբ:

Հարգանքներով՝

Բնօրինակը ստորագրել է՝

ՄԻՉԻ Էյ. ԳԵՅԹՍ (MICHI A. GATES, Ph.D.)
Ծրագրային ծառայությունների գլխավոր տնօրենի տեղակալ

cc: Տարածաշրջանային կենտրոնի ադմինիստրատորներ
Տպառողական ծառայությունների տարածաշրջանային կենտրոնների տնօրեններ
Տարածաշրջանային կենտրոնների համայնքային ծառայությունների տնօրեններ
Տարածաշրջանային կենտրոնների գործակալությունների ասոցիացիա
Փիթ Սերվինկա (Pete Cervinka), Զարգացման ծառայությունների բաժին
Կառլա Կաստանեդա (Carla Castañeda), Զարգացման ծառայությունների բաժին
Էռնի Քրուզ (Ernie Cruz), Զարգացման ծառայությունների բաժին